

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ
YEREVAN STATE UNIVERSITY

ԱՐԱԲԱԳԻՏԱԿԱՆ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

JOURNAL
OF
ARABIC STUDIES

№ 10

ISSN 1829-4510

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
YEREVAN YSU PRESS

2018

*Հրատարակվում է ԵՊՀ արևելագիտության
ֆակուլտետի գիտական խորհրդի որոշմամբ*

*Published by the decision of the scientific council of
the Oriental Studies Department, Yerevan State University*

Խմբագրական խորհուրդ

Editorial Board

Դավիթ Հովհաննիսյան – բ.գ.թ.,
պրոֆեսոր (նախագահ)
Մարգարիտա Խաչիկյան
բ.գ.դ., պրոֆեսոր
Ռուբեն Կարապետյան
պ.գ.դ., պրոֆեսոր
Արշակ Փոլադյան
պ.գ.դ., պրոֆեսոր
Գուրամ Չիկովանի
բ.գ.դ., պրոֆեսոր (Վրաստան)
Սամվել Կարաբեկյան
բ.գ.թ., դոցենտ
Մուշեղ Ասատրյան
PhD (Կանադա)
Սոնա Տոնիկյան
բ.գ.թ., դոցենտ
Մարատ Յավրումյան
բ.գ.թ., դոցենտ
Հայկ Քոչարյան
պ.գ.թ., դոցենտ
Արայիկ Հարությունյան
պ.գ.թ.

Prof. David Hovhannisyan
(editor in chief)
Prof. Margarita Khachkyan
Prof. Ruben Karapetyan
Prof. Arshak Poladyan
Prof. Guram Chikovani
(Georgia)
Dr. Samvel Karabekyan
Mushegh Asatryan, PhD
(Canada)
Dr. Sona Tonikyan
Dr. Marat Yavrumyan
Dr. Hayk Kocharyan
Dr. Arayik Harutyunyan

© Երևանի պետական համալսարան, 2018

© Yerevan State University, 2018

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վարդան Ղափլանյան

ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԲՆԱԿՎՈՂ ԻՍԼԱՄԱԴԱՎԱՆ ԱԲԽԱԶԱԿԱՆ
ՀԱՄԱՅՆՔԻ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ 1992
-1993 ԹԹ. ՎՐԱՅ-ԱԲԽԱԶԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՏԱՐԻՆԵՐԻՆ.....9-22

Գայանե Մկրտումյան

ԵԳԻՊՏՈՍԻ ԵՎԱՃՈՒՄԸ ՕՄԱՐ ԻԲՆ ԱԼ-ԽԱՏՏԱԲ (634-644)
ԽԱԼԻՖԱՅԻ ՕՐՈՔ ՔՐԻՍՏՈՆԵԱԿԱՆ ԵՎ ՍՈՒՍՈՒԼՄԱՆԱԿԱՆ
ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ.....23-32

Արամայիս Գրիգորյան, Վարդան Ղափլանյան

ԹՈՒՐՔԻԱՅԻ «ՌԱԶՄԱՎԱՐԱԿԱՆ ԽՈՐՈՒԹՅԱՆ» ԴՈՎՏՐԻՆԻ
ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆԸ ՄԵՐՁԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔՈՒՄ ԵՎ ՀԱՐԱՎԱՅԻՆ
ԿՈՎԿԱՍՈՒՄ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ
ՀԱՄԱՏԵՔՍՈՒՄ.....33-46

Արշակ Գևորգյան

1950-1960 ԹԹ. ԹՈՒՐՔԻԱՅԻ ԻՇԽՈՂ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱԿԱՆ
ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԲԵՔԹԱՇԻ ՍՈՒՖԻԱԿԱՆ
ՄԻԱԲԱՆՈՒԹՅԱՆ ՓՈԽՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՋ.....47-60

Աբու Ջափղ Ալի Մուսա

«ՊԱՂԵՍԻՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԶՍԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ»
(«ՖԱԹՀ») ՍՏԵՂԾՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ.....61-75

Լուսինե Մկրտչյան

ԻՍՐԱՅԵԼԻ «ՎԵՐԱԴԱՐՁԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔԻ
ԻՐԱՎԱԿԱՆ ԱՍՊԵԿՏՆԵՐԸ.....76-85

Գազիկ Համբարյան

ԿԱՏԱՐՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ ԵՎ ԱՄՆ-Ի

ՄԵՐՁԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ ՇԱՀԵՐԸ..... 86-95

Դավիթ Հովհաննիսյան, Արու Զաիր Այի Մուսա

ԻՍՐԱՅԵԼԱԲՆԱԿ ՊԱՂԵՍՏԻՆՅԻ ԱՐԱԲ ՔԱՂԱՔԱԿԱՆ

ԱՌԱՋՆՈՐԴՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՊԱՂԵՍՏԻՆՅԱՆ

ՊԱՌԱԿՏՄԱՆ ԵՎ ԴԻՍ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ..... 96-113

Վահե Աղասարյան

ԹՈՒՐԲԻԱՅԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՍԻՐԻԱՅՈՒՄ

ԵՎ ՔՐԴԱԿԱՆ ԳՈՐԾՈՆԸ..... 114-120

ԻՍԼԱՄԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

Աննա Գևորգյան

ՄԵԿ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ, ՏԱՐԲԵՐ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆԵՐ.

ԱԼԻ ԽԱՄԵՆԵԻԻ ԵՎ ՀԱՄԱՆ ՌՈՒՀԱՆԻԻ ՈՐՈՇ

ՏԱՐԱՋԱՅՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ..... 121-134

Շուշան Կյուրեղյան

ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՆԵՐՆ ԸՍՏ ԻԲՆ ԱԼ-ՋԱՌԻԶԻ

«ԹԱԼԲԻՍ ԻԲԼԻՍ» ԱՇԽԱՏՈՒԹՅԱՆ..... 135-162

Տաթևիկ Մկրտչյան

ՆԱԿՑ ԱԼ-ԲԱԼՁԳԱ-Ի ՈՒՂԵՐՁ-ՆԱՄԱԿՆԵՐԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԵՎ

ԲՈՎԱՆԴԱԿԱՅԻՆ ԱՌԱՋՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՇՈՒՐՁ..... 163-176

Լևոն Պետրոսյան

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՄՉԿԻԹՆԵՐԸ

(ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ)..... 177-200

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Դավիթ Հովհաննիսյան

«ԱՐԱԲԸ» ՈՐՊԵՍ ԻՆՖՈՐՄԱՅԻՈՆ ՀՈՍՔԵՐԻ

ԱՂԱՊՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԻՔ..... 201-213

Լուսինե Տեր-Հովհաննիսյան

ԲԱՆՏԱՅԻՆ ԵՐԿԻ ԺԱՆՐՆ ՄԵՐՉԱՎՈՐԱՐԵՎԵԼՅԱՆ

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ. «ՀԱԲՄԻԵ».....214-222

Ամայյա Գրիգորյան

ԵՐԳ ԵՐԳՈՑԻ ԵԲՐԱՅԱԿԱՆ ԲՆԱԳԻՐԸ ԵՎ ՀԱՅԵՐԵՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....223-234

ԼԵԶՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հասմիկ Երիցյան

ԱՐԱԲԵՐԵՆԻ ՃԳՆԱԺԱՍԸ

ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՑՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ.....235-255

Զարուհի Խաչատրյան

ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ՁԻԱՆՈՒՆՆԵՐ ԸՍՏ

ՊԱՐՄԿԵՐԵՆ «DO FARASNĀME. MANSUR O MANZUM»

ՁԻԱՄԱՏՅԱՆԻ.....256-270

Մերվաթ Գոմասա Արդուլլահ Օսման

ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ԱՐԱԲԵՐԵՆՈՒՄ ԸՆԴՀԱՆՈՒՐ

ՀՈՒՆԱԿԱՆ ՓՈԽԱՌՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ.....271-283

CONTENT

HISTORY

Vardan Ghaplanyan

THE FORMATION AND ACTIVITY OF THE MUSLIM ABKHAZIAN
COMMUNITY OF TURKEY DURING 1992-1993 GEORGIAN-
ABKHAZIAN WAR.....9-22

G.ayane Mkrtumyan

THE CONQUEST OF EGYPT DURING THE REIGN OF KHALIFA
OMAR IBN AL-KHATTAB IN CHRISTIAN AND MUSLIM
HISTORIOGRAPHY (634-644).....23-32

Aramayis Grigoryan, Vardan Ghaplanyan

THE IMPLEMENTATION OF TURKEY'S "STRATEGIC DEPTH"
DOCTRINE IN THE CONTEXT OF CONFLICT RESOLUTION
IN THE MIDDLE EAST AND SOUTH CAUCASUS.....33-46

Arshak Gevorgyan

REFLECTIONS AROUND THE INTERRELATIONS BETWEEN
THE TURKEY'S RULING (1950-1960) DEMOCRATIC PARTY
AND THE BEKTASHI SUFI ORDER.....47-60

Abu Zayd Ali Musa

THE FORMATION AND DEVELOPMENT OF "PALESTINIAN
NATIONAL LIBERAL MOVEMENT" (FATAH).....61-75

Lusine Mkrtchyan

LEGAL ASPECTS OF THE LAW OF RETURN.....76-85

Gagik Hambaryan

QATAR CRISIS AND MIDDLE EAST
INTERESTS OF THE USA.....86-95

Davit Hovhannisyan, Abu Zayd Ali Musa

ISRAELI PALESTINIAN ARAB POLITICAL LEADERS'
POSITION ON PALESTINIAN SPLIT AND IT'S REASONS.....96-113

Vahe Aghasaryan

THE POLITICS OF TURKEY IN SYRIA AND
THE KURDISH FACTOR.....114-120

ISLAMIC STUDIES

Anna Gevorgyan

ONE REVOLUTION, DIFFERENT REVOLUTIONARIES: SOME
TENSIONS BETWEEN THE PRESIDENT
ROUHANI AND AYATOLLAH KHAMENEI.....121-134

Shoushan Kyureghyan

THE INNOVATION AND THE INNOVATORS ACCORDING
TO 'IBN AL-JAWZĪ'S "TALBĪS IBLĪS".....135-162

Tatevik Mkrtchyan

DISCUSSION OF SOME STRUCTURAL AND CONTEXTUAL
PECULIARITIES OF 'ALI IBN ABĪ TĀLIB'S LETTERS
IN NAHĠ AL-BALĀĠA.....163-176

Levon Petrosyan

THE MOSQUES OF YEREVAN (HISTORICAL APPROACH).....177-200

LITIRATURE

Davit Hovhannisyan

"ADAB" AS THE ADAPTATION INSTRUMENT FOR
THE INFORMATION FLOW.....201-213

Lusine Ter-Hovhannisyan

THE "HABSIYAT" GENRE IN
PERSIAN LITERATURE.....214-222

Amalya Grigoryan

THE HEBREW TEXT AND THE ARMENIAN

TRANSLATIONS OF THE SONG OF SONGS223-234

LINGUISTICS

Hasmik Yeritsyan

CRISIS OF ARABIC LANGUAGE IN

THE UNITED ARAB EMIRATES235-255

Zaruhi Khachatryan

SOME ARABIC ORIGIN HORSE APPELLATIONS

ACCORDING TO PERSIAN LANGUAGE HORSE BOOK

«DO FARASNĀME. MANSUR O MANZUM»256-270

Mervat Gomaa Abdullah Osman

THE GREEK LOANWORDS MUTUAL IN

ARABIC AND ARMENIAN271-283

ԱՐԱԲԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՈՐՈՇ ԶԻԱՆՈՒՆՆԵՐ ԸՍՏ
ՊԱՐՄԿԵՐԵՆ «DO FARASNĀME. MANSUR O MANZUM»
ԶԻԱՄԱՏՅԱՆԻ¹

Զարուհի Խաչատրյան
zara.khachatrian@ysu.am

Բանալի բառեր՝ արաբական, ստուգաբանություն, ձիանուններ, եզր, ձիամատյան, փոխառություն

Պարսկերենում ընտանի կենդանիների անվանումների մեջ առավել հաճախ են հանդիպում արաբերենից փոխառյալ ձիանունները, որոնց միայն մի փոքր մասն է այժմ կիրառվում պարսից լեզվի ակտիվ բառաֆոնդում: Դրանցից շատերը պարսկերենում ենթարկվել են որոշակի հնչյունաբանական և բավականին լայն իմաստաբանական փոփոխությունների: Հարկ է նշել նաև, որ արաբական այդ փոխառությունների նվազ հատվածն է փոխատու լեզվում հանդես գալիս ձիանվան նշանակությամբ: Պարսից լեզվի միջնադարյան բառարաններում դրանց վկայությունները չնչին են, իսկ հիմնական մասը հանդիպում է ավելի ուշ շրջանի հուշարձաններում: Արաբական «ձի» նշանակությամբ որոշ փոխառություններ էլ պարսկերենից անցել

¹ Do Farasnāme, Mansur o manzum (1366/1987). That-e nazar-e doctor Mehdi Mohaqeq, Majmu'e-ye tārix-e 'olum dar eslām, (այսուհետև հոդվածում՝ DF): Սույն ժողովածուի մեջ (աշխատասիրությամբ՝ Ալի Սոլթանի Գերդֆարամարզի) զետեղված են արձակ և չափածո երկու ձիամատյաններ: Արձակ ձիամատյանից շատ քիչ էջեր պահպանվել են մասնավոր մի գրադարանում: Չափածո ձիամատյանի գրվել է Հիջ. 1171թ-ին Ֆախր էդ-դին Ալի Սաֆի անունով մի բանաստեղծի կողմից և ընծայվել է Մեֆյան շահ Թահմասպին: Այն նույնպես ամբողջովին չի պահպանվել (19 թերթ): Այժմ գտնվում է Իրանի ազգային գրադարանում:

են նաև իրանական այլ լեզուների կա՛մ նույն նշանակությամբ կա՛մ էլ իմաստի որոշակի փոփոխությամբ:

Այս հոդվածի շրջանակներում կանդրադառնանք «*Do farasnāme. Manzur o mansur*» պարսկերեն ձիամատյանում հիշատակված արաբական որոշ ձիանունների՝ դրանք ենթարկելով մանրամասն քննության:

Պարսկերենում լայնորեն տարածված **abraš** (ابرش)² ձիանունն ունի 1. սպիտակ պուտերով կարմիր ձի, 2. շատ մանր պուտերով ձի, 3. մաշկի գույնին հակառակ խառը գույներով պտավոր ձի, 4. դեղնակարմրավուն պիսակներով աշխետ ձի, 5. կարմիր, սև ու սպիտակ մազերով ձի, 6. ճանճկեն, պիսակավոր նժույգ (LD I:241; FM I:122; FA 121; P I: 36)³ իմաստները: Բառամիավորը ծագում է արաբական *brš* «պտավոր լինելը» արմատից: Ձիանունը հիշատակված է դեռևս Օմմար Խայյամի (Ommar Xayyām, 10-րդ դար) «Nouruznāme»⁴ և Օնսոր ալ-Մա՛ալի Քեյքավուսի (Օnsor al-Ma՛ali Keykāvus, 11-րդ դար) «Qābusname» ստեղծագործություններում:⁵ Ձիամատյանում ձին վկայված է նաև *faufi* անունով, երբ ձիու դեղնակարմրավուն երանգը հարում է սևին:⁶ Եզրը ձիու նույն նշանակությամբ վկայված է նաև 17-րդ դարի պարսից միջնադարյան «Farhang-e Jahangiri» (I:627)⁷ և «Borhān-e Qāte՛» (I:79)⁸ բացատրական բառարաններում, իսկ ավելի

² DF, Farasnāme-ye Mansur 19, 22, 23, (այսուհետև հոդվածում՝ FMS); Farasnāme-ye manzur 137, 138 (այսուհետև հոդվածում՝ FMZ).

³ Dehxodā, A. (1993-1994), Loyatnāme-ye Dehxodā, (այսուհետև հոդվածում՝ LD); Mo՛in, M. (1977) Farhang-e fārsi (այսուհետև հոդվածում՝ FM); Amid, H. (1979), Farhang-e fārsi, (այսուհետև հոդվածում՝ FA). Рубинчик, Ю. (1985), Персидско-русский словарь (այսուհետև հոդվածում՝ P):

⁴ Xayyām, Օ. 1312/1933:110 (այսուհետև հոդվածում՝ OX).

⁵ Keykāvus, Օ. 1335/1956:107.

⁶ DF, FMS: 19.

⁷ Inju Širāzi, H. Farhang-e Jahāngiri II (այսուհետև հոդվածում՝ FJ).

⁸ Xalaf-e Tabrizi, M. Borhān-e Qāte՛, IV (այսուհետև՝ BQ).

ուշ շրջանի «Farhang-e Nafisi»⁹ բառարանում (1938-1955թթ.) այն հիշատակվում է միայն «մաշկի գույնին հակառակ խառը գույներով պտավոր ձի» (I:65) իմաստով: *Abras* եզրը պարսկերենում կազմում է նաև *burabras* (*bur-* < հին իր. **baura-* նախաձևից՝ «մուգ շագանակագույն, փայլուն դեղնակարմիր») ¹⁰ «սպիտակ պուտերով հրակարմիր ձի» բարդությունը: «DF» ձիամատյանում հիշատակված *abras*, *burabras* և *siyāhabras*¹¹ եզրերը պարսկերենում իմաստային հոմանիշներ են համարվում՝ «սև, կարմիր, սպիտակ մանր պուտերով ձի» նշանակությամբ: Արաբական նույն արմատին է հանգում նաև պարսկերենում վկայված *baris*՝ 1. երկգույն ձի, 2. մաշկի վրա հիմնական գույնին հակառակ պուտերով ձի եզրը, ինչպես նաև *ebresāš* բառը՝ «ձիու պտավոր դառնալ» իմաստով (LD I:241): Քննարկվող բառամիավորը ժ. պարսկերենում կիրառվում է նաև «ձիու զարդ, զարդարանք» (LD I:241) նշանակությամբ: Արաբական այս փոխառությունը հանդիպում է նաև իրանական լեզուներից քրդերենում՝ *ebres* «պուտերով ձի», մազանդարաներենում՝ *abres* «1. երկգույն կենդանի, 2. պտավոր»¹² իմաստներով:

Ուշագրավ է նաև բառամիավորի կիրառությունը հայերենի բարբառներում: Հր. Աճառյանը *աբրաշ* եզրը տալիս է Արցախի բարբառում՝ «լծկան գոմեշ, եգ» նշանակությամբ:¹³ Հայերենում այն կիրառվում է նաև «աշխատող, չարքաշ» իմաստով:

Ablaq (ابلق)¹⁴ 1. երկգույն ձի, 2. միայն սև ու սպիտակ գույնի ձի, 3. սև ու սպիտակ, պիսակավոր, խայտաբղետ, սպիտակ բծերով չալ

⁹ Nafisi, 'A., Farhang-e Nafisi V (այսուհետ՝ FN).

¹⁰ Hasandust, M. 1393/2014 I, 527.

¹¹ DF, FMS:22.

¹² www.tabarestan.ir (08.04. 2018).

¹³ Հայոց լեզվի բարբառային բառարան, I, 2 (այսուհետև՝ ՀԼԲԲ):

¹⁴ DF, FMS:18,23; FMZ:132, 139.

կենդանի (LD I:248), բոց. «երկզույն»: Եզրը հանգում է արաբական *blq* «բժավոր, պիսակավոր լինելը» արմատին: Բառամիավորը «երկզույն» նշանակությամբ իմաստային ընդհանրություն ունի նաև *ablak* և *abluk* ձևերի հետ (BQ I:73; OX 53; LD I: 248- 249; F'A 124; ՀՄ I: 47;¹⁵ P I: 39): Բառը պարսից միջնադարյան բառարաններում ձևանվան նշանակությամբ վկայված չէ: «DF» ձևամատյանում բավականին մանրամասն խոսվում է ձիու գունային առանձնահատկությունների մասին և հիշատակում դրա *komeyt ablaq, bur ablaq* և *siyāh ablaq* տարատեսակները:¹⁶ Ձին կոչվում է նաև *nabate*, երբ «սպիտակությունը տարածված է ամբողջ մարմնի վրա»: Եզրը ձիու սև ու սպիտակ թույրն է նաև իրանական այլ լեզուներում: Վախաներենում, մունջաներենում, աֆղաներենում այն կոչվում է *ablaq, (h)ablak/q*,¹⁷ իսկ Գիլան նահանգի Արքենարի և Զիյաբարի բարբառներում, բացի ձիանվան վերոհիշյալ իմաստներից, նշանակում է նաև «կարմիր և սպիտակ գույնի կով»:¹⁸

Adra' (عرا') ¹⁹ 1. սև գլխով և սպիտակ մարմնով ձի, 2. գլուխը և վիզը սպիտակ ձի, 3. ոչ ազնվացեղ ձի, 4. ոչխար, 5. սև գլխով և սպիտակ մարմնով ուրիշ այլ կենդանի (LD I: 1323), 6. սև ու սպիտակ ձի կամ ոչխար, 7. ոչ ազնվացեղ ձի (FN I: 144): Եզրը արաբերենում հանգում է *dr'* «զրահապատելը, զրահ հագնելը» անորոշ դերբային:

Հարկ է նշել, որ բառամիավորը վկայված է նաև միջին հայերենում՝ «ձի, որի մարմինը սպիտակ է, իսկ գլուխն ու վիզը այլ գույնի»²⁰ նշանակությամբ: Բառանվան մյուս վկայությունը տեսնում ենք 13-րդ դարի «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ»

¹⁵ Մանսուրյան, Հ., 2005 (այսուհետև՝ ՀՄ):

¹⁶ DF, FMS:23.

¹⁷ Стеблин-Каменский, И. М., 1999:76.

¹⁸ Sotude M., 1390/ 2011:25.

¹⁹ DF, FMS:23.

²⁰ Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., 2009,83 (այսուհետև՝ ՄՀԲ):

(ԺԳ դար) հայերեն ձևամատյանում. «Եւ կան ի ձիանն չալ ձի, որ լինի իր ամէն մարմինն սպիտակ ու գլուխն ու շլինքն այլ գոյն, զինչ որ լինի. ասէ իր յարապն *ստրայա*»:²¹

Adyam (آدم)²² 1. սև քթով ձի, 2. ձի կամ որևէ չորքոտանի, որի քիթը դեմքից ավելի սև է, 3. առանձնահատուկ գույնի ձի (LD I: 1331; II 10023-10024; FA 87): Ջիանվան արաբական արմատն է *dym* «միացնելը, կազմի մեջ մտցնելը»: Պարսկերենում նույն ձիու մատակն է *daymā* բառաձևը (LD VII:9625): «DF» ձիամատյանում ձիու արտաքին նկարագրությունը ամբողջովին տարբերվում է պարսից լեզվի բացատրական բառարաններում տրված բացատրությունից:

Adham (آدم)²³ 1. մոխրագույն ձի կամ ուղտ, որի մոխրագույնը սև ու սպիտակ խառը գույներին է հարում, 2. սևաթույր նժույգ, սև բաշով և կարմիր պոչով ձի, 3. հեծկան կամ բեռնակիր անասուն (LD I:1342; FM I:182; ZU I:66), բոց. «սև կամ մուգ գույն»: Բառանունը բառաբարդված է արաբական *dhm* «սևացնելը, ծխով, մրով պատելը» արմատից: Եզրը պարսկերեն ձիամատյանում հիշատակվում է նաև «ձիու մուգ կարմիր՝ սևին հարող թույրը» իմաստով, որն ըստ ձիամատյանի, ձիու թույրերի մեջ առաջնակարգ գույն է համարվում:²⁴ Եզրը «Farhang-e Nafisi» բառարանում հանդես է գալիս մեկ այլ՝ «մոխրագույն՝ սևին հարող ուղտ» նշանակությամբ (I:149): Արաբական նույն արմատին է հանգում նաև պարսկերենում հանդիպող *edhemām* «1. սևանալ, 2. ձիու սևանալ, կարմրել» բառամիավորը:

²¹ Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ, 1980,57 (այսուհետև՝ Բ2):

²² DF, FMS:20.

²³ DF, FMS:18; FMZ:132, 138.

²⁴ DF, FNS:21. Այս մասին տե՛ս նաև Hasanli, K., Ahmadiyān, L., Kārkard-e rang dar "Sāhnāme-ye" Ferdowsi, Faslnāme-ye "Adabpažuhi", Tehrān, 1386/2007, §. 2, s. 144-165.

Եզրը տեղ է գտել նաև Ռ. Ղազարյանի և Հ. Ավետիսյանի «Միջին հայերենի» բառարանում՝ *asnhawf* «մուգ սև ձի» նշանակությամբ:²⁵ Այն նույնն իմաստն ունի նաև հայերեն ձիամատյանում. «Կան ի ձիանին թուխ սև և փայլկտուկ. եւ յարապն ասէ իր անուն *asnhawf*»:²⁶

Arsam (ارشم)²⁷ 1. քթի ծայրը կամ վերին շրթունքը սպիտակ ձի, 2. ձի, որի վերևի շրթունքի գույնի մեջ սպիտակություն կա, 3. ոչխար, որի քթի ծայրը սև է, իսկ ամբողջ մարմինը՝ սպիտակ (LD I:1399; FN I:145): Եզրը պարսկերեն բացատրական բառարաններում իմաստային հականիշ է համարվում *almaz* «ներքևի շրթունքի մեջ սպիտակություն ունեցող ձի» (LD II:2795) բառամիավորին: Հետաքրքիր և ուշագրավ է այն, որ արաբական որոշ ձիանուններ պարսից լեզվի բացատրական բառարաններում մեծամասամբ հանդես են գալիս արտաքին առանձնահատկությունը նշող իրենց իմաստային հականիշային գույգով: Արաբական նույն արմատից է նաև *elmezāz* «ձիու ներքևի շրթունքի սպիտակելը» եզրը:

Arjal (ارجل)²⁸ 1. ձի, երիվար, 2. ոտքի վրա սպիտակ նշան ունեցող ձի, 3. որի առջևի կամ ետևի մեկ ոտքը ամբողջովին սպիտակ ձի, 4. ձի, որի երեք ոտքերը սպիտակ են, իսկ մեկը՝ ուրիշ գույնի (LD I:1411; F'A:154; FS I:113): Բառամիավորն իր վերջին իմաստային նշանակությամբ դասվում է արտաքին հազվադեպ հատկանիշներ ունեցող ձիերի շարքին: Պարսկերենում այսպես է կոչվում նաև ձիու «առջևի ու ետևի ոտքերի սպիտակ լինելու» ֆիզիկական առանձնահատկությունը (FM I:195): Եզրը վկայված է պարսից լեզվի միջնադարյան «Yiyās ol-loyāt» բացատրական բառարանում (LD I:1411), որտեղ «երեք ոտքը սպիտակ, իսկ մեկ

²⁵ ՄՀԲ, 83:

²⁶ ԲՁ, 55:

²⁷ DF, FMS:27.

²⁸ DF, FMZ:140.

ուտքը այլ գույնի ձին» չարաբաստիկ, դժբախտությունն բերող ձի է համարվում, ինչպես նաև ավելի ուշ շրջանի «Farhang-e Nafisi» բառարանում (I:167): Ըստ վկայված արաբական աղբյուրների²⁹ նման արտաքին թերությունն ունեցող ձին չի կարող դասվել ազնվագարմ ձիերի շարքին: Բառամիավորը հանգում է արաբերեն *rajl* «տղամարդ, առաջատար դառնալը» արմատին: Պարսկերենում նույն արմատից է կազմված նաև *rajal* եզրը՝ 1. ձիերի երամակի վրա բաց թողնված ձի, 2. ձիերի երամակի մեջ ազատ արձակած ձի, 3. ուղտի ձագը մոր հետ, որը ցանկացած տեղ ուզում է կաթ ուտել (LD VII:10236): Բառանունը ժամանակակից պարսկերենում ունի նաև «ավագ, ուժեղ մարդ» նշանակությունը:

Ašqar (اشقر)³⁰ 1. աշխետաձի, 2. կարմիր բաշով ու պոչով ձի, 3. ձի, որի կարմիր գույնը փայլուն սևին է տալիս, 4. մուգ կարմրադեղնավուն՝ սևին հարող երանգով ձի, 5. ձիու դեղնակարմիր, հրակարմիր թույրը (LD II:2253; FA 202; FM I:97): Բառամիավորը հանգում է արաբական *šqr* «շիկակարմիր, հրակարմիր լինելը» արմատին: Պարսկերենում եզրը, որպես առաջին բաղադրիչ նշելով ձիու թույրը, հանդիպում է հետևյալ ձիանուններում՝ *ašqar-e adham* «շիկասևաթույր ձի», *ašqar-e asbah* «կարմրասպիտակավուն ձի», *ašqar-e madami* «կարմրադեղնավուն ձի» (LD I:1342; FM I: 182; P I:90): Ձին հիշատակում է Օ. Խայյամը՝ նշելով միայն ձիանվան վկայությունները տարբեր արաբական բառարաններում:³¹ «DF» ձիամատյանում բավականին մանրամասն նկարագրվում է ձիու թույրը և ֆիզիկական արտաքին առանձնահատկությունները: Եզրը «Farhang-e Nafisi» բառարանում վկայված է մեկ այլ իմաստով՝ «մուգ կարմիր գույնի ուղտ»,

²⁹ Աղբյուրների հիշատակությունը բերված է Դեհխոդայի բառարանի հասմապատասխան բառահոդվածում:

³⁰ DF, FMS:21.

³¹ 'OX, 1312/1933:55,111:

«կարմիր մազերով ուղտ» (I:267): Ձիանունը հիշատակվում «Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ» հայերեն ձիամատյանում, որտեղ ձիու բացատրությունը փոքր-ինչ հեռանում է ձիանվան հայտնի իմաստից. «...Ի յոր ոտք որ կենար սպիտակ ու կենայ ի յինք սև մազեր խառն, նա ասեն իր *աշխամ*»:³² Ձիամատյանը նկարագրելով ձիուն և նրա դեղնակարմրավուն թույրը, հետևյալն է ասում. «Աշխամը մի քանի հազար երանգ է ունենում, ոմանք *խլուֆի* են ասում, որ դեղին է և մազերը զաֆրանի գույն»:³³ Այնուհետև նշվում է, որ հավանաբար գրիչը այստեղ արաբերեն գ (ق) տառը շփոթել է f (ف)-ի հետ:³⁴

Ašhab (أشهب) ³⁵ 1. սպիտակ ձի, 2. խառը գույներով՝ սևը կամ սպիտակը գերիշխող ձի, 3. մոխրագույն նժույգ, գորշ գույնի ձի, 4. սպիտակ մազերով ձի, կապույտ ձի, 5. սպիտակ ջորի, 6. սպիտակ էգ այծ (LD II:2289-2290, 2426; LD V:7126; F'A:205; FM I: 289; ՀՄ I:98), բոց. «սևն ու սպիտակը իրար խառնված գույն, որտեղ գերակշռում է սպիտակը»: Եզրը արաբերենում հանգում է *šhb* «մոխրագույն, արծաթափայլ լինելը» արմատին: Ձիմատյանում ըստ գույնի առանձնահատկության ձիու հետևյալ անվանումներն են հիշատակվում՝ *ašhab-e ahmar be sorxi*, *ašhab-e ahmar be siyāhi*, *ašhab-e xeng*, *ašhab-e mollamā*:³⁶ Բառամիավորը իրանական լեզուներից հանդիպում է նաև քրդերենում՝ *ešheb* «ձիու մոխրագույն թույրը»:³⁷ Եզրը որպես առաջին բաղադրիչ նշանակելով «ձի», պարսկերենում կազմում է նաև՝ *ašhab-e axzar*

³² ԲԶ, 58:

³³ ԲԶ, 55, 59:

³⁴ Արաբերենում *xalug* բառը «հոտավոտ նյութ՝ օծանելիք» նշանակությունն ունի, որը հանդիպում է նաև պարսկերենում՝ «շաֆրանից պատրաստված բուրավետ նյութ» իմաստով:

³⁵ DF, FMS:27; FMZ:132.

³⁶ DF, FMS:22, 23.

³⁷ Курдоев, К., 1960:240.

«կանաչ երկգույն ձի՝ կանաչ-սպիտակ, կանաչ-սև» (LD II:2291), *ašhab-e adham* «երկգույն սև ձի» (LD II:2291), *ašhab-e ašqar* «հրակարմիր գույնի ձի, աշխետ ձի» (LD II:2291), *ašhab-e hadidi* «ձիու սպիտակ թույրը սև մազերի հետ, որտեղ գերիշխողը սևն է», *ašhab-e sūsani* «ձիու դեղին թույրը սպիտակի հետ», *ašhab-e qertāsi* «ձիու փայլուն սպիտակ թույրը», *ašhab-e kafuri* «սպիտակ մարմնով ու սև մազերով ձի», որը նաև ձիու թույր է (LD II:2291), *ašhab-e modannar* «սպիտակ փայլուն, տարածված պուտերով ձի», *ašhab-e mofallas* «սպիտակ փայլուն ձի, վրա սև կետեր կան» (LD II:2291) բարդությունները: Պարսկերենում նույն արմատից է նաև *šāheb* արաբական փոխառությունը՝ 1. սպիտակամազ ձի, 2. մարմնի վրա սպիտակ նշաններ ունեցող ձի, որը գերազանցում է սևին կամ նրա մարմնի հիմնական գույնին, 3. մոխրագույնը սևի ու սպիտակի հետ միասին խառը երանգով ձի (LD IX:12397), ինչպես նաև *šahab/šohbat* (LD IX:12868) «սպիտակը սևի վրա» գունախառնուրդի անվանումը: Ձիանվանվան վկայությունը հանդիպում է նաև միջին հայերենում՝ *աշխայ* «սպիտակավուն, մոխրագույն» նշանակությամբ:³⁸

Xa(-e)yl (خيل)³⁹ 1. ձիերի խումբ, երամակ 2. ձիեր, 3. այրուձի, հեծյալների բանակ (LD VI:8965; F'A:593; FM I:1471; FS II:971; B:243): Եզրը նույն նշանակությունն ունի նաև արաբերենում: Այն պարսից լեզվի միջնադարյան բառարաններում վկայված է միայն «զորք, բանակ» նշանակությամբ: Պարսկերենում բառանվան իմաստային հոմանիշներն են *silah* (LD VIII:12251; FM II:1982; P II:52), *fasilah* (LD X:15135), *fasila* (-e) (FM II:2547) արաբական փոխառությունները: Բառիմաստի ընդլայնման արդյունքում պարսկերենի

³⁸ ՄՀԲ, 69:

³⁹ DF, FMS:15.

անորոշության *ḡ-/i-* հոդի հավելմամբ այն ստացել է «շատ, բազում» իմաստը:

Komayt (-meyt) (کمیت)⁴⁰ 1. սև պոչով և կարմիր բաշով ձի, 2. փայլուն մուգ կարմիր՝ սևին խփող թույրով ձի, որի պոչն ու բաշը սև են, 3. կարմիրի ու սևի միջև գտնվող թույրը (LD XI:16395; FM III:3078): Եզրը կիրառվում է ինչպես հովատակի, այնպես էլ մատակի համար: Բառամիավորը «Nouruznāme»-ում հիշատակվում է «դիմացկուն և հաստատակամ ձի» իմաստով:⁴¹ Ձիանվան նշանակությամբ *O*. Խայյամը վկայում է նաև մեկ այլ բարդություն՝ *pise komeyt* «չենթարկվող, վատ բնույթի ձի»⁴² եզրը, բոց. «պիսակավոր սև պոչով ու կարմիր բաշով ձի»: Եզրը հիշատակվում է նաև «Qābusnāme»-ում որպես «ամենալավ գույնի ձի»:⁴³ Բառանունը նույն իմաստն ունի նաև միջնադարյան «Borhāne Qāte» բառարանում (III:1697): Բառանունը արաբերենում նաև ձիու «շիկակարմիր, շառատագույն» թույրն է, որը նույնն է նաև պարսկերենում: Պարսկերենում ձիու վերոնշյալ թույրի հոմանիշային գույգերն են *ašqar* (LD II:2253; FĀ:202; ՀՄ I:97), *kahar* (LD XI:16565; FM III:3142; ՀՄ II:858), *koran / korand / koranda (-e) / korang / korange / kūrang / koranga (-e)* (LD XI:16125, 16127, 16128; P II: 322)՝ «կարմիր գույնը փայլուն սևին հարող» բառաձևերը: Ձիանունը հանդիպում է նաև ժամանակակից իրանական լեզուներից քրդերենում՝ *koumeit* «սև բաշով ու պոչով շեկ ձի» (III:1921) նշանակությամբ:⁴⁴

Ուշագրավ է նաև ձիու վկայությունը հայերենում: Նոր Հայկազյան բառարանում եզրն ունի *քումայթ* «խարտյաշ, շեկ»⁴⁵

⁴⁰ DF, FMS:20, 137.

⁴¹ 'OX, 1312/1933:53.

⁴² 'OX, 1312/1933:116.

⁴³ Keykavus, 'O. 1335/1956:106.

⁴⁴ Dictionnaire kurde-français, 1879:342.

⁴⁵ Նոր բառգիրք հայկազեան լեզուի, 1837, II, 1012:

նշանակությունը, որը նույնն է նաև «Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական»⁴⁶ և «Առձեռն բառարան հայկազնեան լեզուի»⁴⁷ բառարաններում: Հր. Աճառյանը սխալ համարելով վերոհիշյալ մեկնությունը, բառին տալիս է արաբ. *kumait* «արմավագույն մարմնով և սև պոչով ձի» բացատրությունը:⁴⁸ Եզրն իր գործածությունն է գտել նաև միջին հայերենում՝ վկայելով բառանվան արաբական ծագումը. *քումայթ* 1. արմավագույն, 2. նույն գույնի ձի նշանակությամբ:⁴⁹ Ձիու գույնի առանձնահատկության մասին է խոսվում նաև «Գիրք Վաստակոցում». «Գովելիքն 'ի գոյնս՝ երեք են: Պղատուն իմաստունն զպօզն գովեաց, եւ 'ի հետ՝ զճնդիկ սեն. եւ ապա զքումայթն»⁵⁰ և միջնադարյան հայերեն ձիու բժշկարանում. «...Եւ կա իսստ թխգոյն քումայթ: Եւ կան ի քումայթնին կարմիր թխգոյն»⁵¹ : Բառամիավորը ժամանակակից հայերենի բացատրական բառարաններում չի հանդիպում:

Modannar (مدنر)⁵² պտավոր, ճանճկեն ձի, որի մարմնի պուտերն ավելի շատ են հայտնի *abraš* պտավոր ձիու խալերից (LD XII:18148): Բառանունը հանգում է արաբերեն *dnr* «դրամ կտրելը, հատելը» արմատին: Եզրը նաև ձիու «պտավոր, ճանճկեն» արտաքին հատկանիշն է, որից էլ պարսկերենում ունենք *ašhab-e modannar* «փայլուն սպիտակ սև պուտերով ձի» (LD II:2291) բարդությունը:

Այսպիսով, «*Do Farasnāme. Mansur o manzum*» պարսկերեն ձիամատյանը գիտական, գրական և մշակութային տեսակետից

⁴⁶ Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, 1837,1481:

⁴⁷ Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, 1865,837:

⁴⁸ Հայերեն արմատական բառարան, IV, 1926,591:

⁴⁹ ՄՀԲ, 815:

⁵⁰ Գիրք Վաստակոց, 1877,199:

⁵¹ ԲԶ, 55:

⁵² DF, FMZ:138.

շատ արժեքավոր երկ է: Այն բավականին հանգամանալից տեղեկություններ է տալիս պարսկերենում հանդիպող բնիկ և արաբական փոխառյալ ձիանունների, դրանց ցեղատեսակների բազմազանության, ֆիզիկական արտաքին հատկանիշների, կառուցվածքային ու գունային առանձնահատկությունների և այլնի մասին: Ձիամատյանում վկայված արաբական ծագման ձիանունները ներկայացված են բավական հարուստ բառապաշարային միավորների բույլով, ինչը բնորոշ է պարսկերենի ողջ ձիանվանական համակարգին՝ հաշվի առնելով արաբերենի թողած նշանակալից ազդեցությունը պարսկերենի վրա, որի արդյունքում արաբերենից փոխառյալ բառերը, ըստ էության, դուրս են մղել բնիկ իրանական ծագման բազմաթիվ բառամիավորներ կամ հանդես են գալիս որպես դրանց հոմանիշներ: Ուշագրավ է հատկապես չափածո ձիամատյանի տրամադրած բառամթերքը, որն իր տեսակի մեջ եզակի է և լրացնում է մյուս աղբյուրներից հայտնի ձիանունների համակարգը որոշ նոր բառամիավորներով: Ձիամատյանում վկայված բառամիավորները կարևորվում են նաև ձիաբուծության վերաբերյալ եզրերի, ձիաբուժական բազմաթիվ նյութերի և դեղաբույսերի ներկայացման տեսանկյունից՝ հատկապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ նշված ոլորտներին առնչվող բառապաշարի զգալի հատվածը կիրառելի է ժամանակակից Իրանում ձիաբուծության մեջ:

**НЕКОТОРЫЕ НАИМЕНОВАНИЯ ЛОШАДЕЙ АРАБСКОГО
ПРОИСХОЖДЕНИЯ СОГЛАСНО ПЕРСИДСКОМУ
ЛЕЧЕБНИКУ ЛОШАДЕЙ «DO FARASNĀME. MANSUR O
MANZUM»**

Резюме

Заруи Хачатрян
zara.khachatryan@ysu.am

Ключевые слова: *арабский, этимология, наименования лошадей, формант, лечебник лошадей, заимствование*

В персидском языке среди наименований домашних животных чаще всего встречаются заимствованные из арабского языка наименования лошадей. В настоящее время только небольшая часть из них используется в активном словарном фонде персидского языка. Большая часть из этих наименований лошадей в персидском языке подверглись некоторым фонетическим и огромным смысловым (семантическим) изменениям. Следует также отметить, что в самом арабском языке только небольшая часть из этих заимствований используется в виде наименований лошадей. Наименования лошадей арабского происхождения, которые перечислены в книге «*Do farasnāme. Manzur o mansur*», представлены довольно богатым соцветием словесных единиц. Некоторые из них рассматриваются в этой статье, подвергнув подробному анализу.

**SOME ARABIC ORIGIN HORSE APPELLATIONS ACCORDING
TO PERSIAN LANGUAGE HORSE BOOK «DO FARASNĀME.
MANSUR O MANZUM»**

Summary

Zaruhi Khachatryan
zara.khachatryan@ysu.am

Keywords: *arabic, etymology, horse names, term, horse book, loanwords*

Most frequently, in the appellation of the domestic animals in Persian language we encounter with the borrowed horse names of Arabic origin, from which only a few are now used in the active word-stock of Persian language. Most of these appellations have been subjected to some phonetic and vast semantic modifications. It should be noted that a few segments of these Arabic loan words are still used as horse appellations in the lender

language. The Arabic origin horse names in the Persian language horse book of «*Do farasnāme. Manzur o mansur*» are represented with quite rich vocabulary units. In this article we have done a comprehensive examination of these appellations.

Գրականության ցանկ

1. Աճառյան, Հր., (1979), Հայերեն արմատական բառարան 4, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն:
2. Բժշկարան ձիոյ և առհասարակ գրաստնոյ (ԺԳ դար), (1980), (աշխ. Չուգասոյան Բ.), Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն:
3. Գիրք Վաստակոց, (1877), Վենետիկ, Վանք Մխիթարայի Ս. Ղազար:
4. Հայոց լեզվի բարբառային բառարան 1, (2001), Երևան, Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, ՀՀԳԱԱ հրատարակչություն:
5. Հայր Աւգերեան Մ. եւ Հայր Ճէլալեան Գ., (1865), Առձեռն բառարան հայկազնեան լեզուի, Վենետիկ, Սուրբ Ղազար:
6. Հայր Աւետիքեան Գ., Հայր Սիւրմէլեան Խ., Հայր Աւգերեան Մ., (1837), Նոր բառգիրք հայկազնեան լեզուի 2, Վենետիկ, Տպարան ի Սրբոյն Ղազարու:
7. Հայր վարդապետ Ջախջախեան Մ., (1837), Բառգիրք ի բարբառ հայ եւ իտալական, Վենետիկ, Տպարան Սրբոյն Ղազարու:
8. Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ., (2009), Միջին հայերենի բառարան, Երևան, Երևանի պետական համալսարանի հրատարակչություն:
9. Մանսուրյան Հ., Պարսկերէնից-հայերէն բառարան Ա, (2005), Թեհրան, Նայիրի հրատարակչութիւն:
10. Курдоев, К.К. (1960). Курдско-русский словарь, Москва, Государственное Издательство Иностраных и Национальных Словарей.

11. Рубинчик, Ю. А. (1985). Персидско-русский словарь, Москва, «Русский язык».
12. Стеблин-Каменский, И. М. (1999). Этимологический словарь ваханского языка, Санкт-Петербург, Петербургское Востоковедение.
13. Dictionnaire kurde-français. (1879). Par M. Auguste Jaba, M. Ferdinaud Justi, St.-Petersbourg.
14. Do Farasnāme, Mansur o manzum. (1366/1987). That-e nazar-e doctor Mehdi Mohaqeq. Tehrān. Majmu'e-ye tārix-e 'olum dar eslām.
15. Amid, H. (1358/1979). Farhang-e fārsi IV. Tehrān. Enteshārāt-e Sakke.
16. Dehxodā, A. (1993-1994). Loḡatnāme-ye Dehxodā XIV. Tehrān. Mousese-ye enteshārāt o čap dānešgah-e Tehrān.
17. Hasandust, M. (1393/2014). Farhang-e rišešenāxti-e zabān-e fārsi I. Tehrān. Farhangestān-e zabān o adab-e fārsi.
18. Hasanli, K., Ahmadiyān, L. (1386/2007). Kārkard-e rang dar "Šāhnāme-ye" Ferdowsi. Tehrān. Fasl-nāme-ye Adabpažuhi. II.144-165,
19. Inju Širāzi, H. (1350/1971)Farhang-e Jahāngiri II. Mašhad, Mousese-ye čap o enteshārāt-e danešgāh-e Mašhad.
20. Keykavus, Onsor al-ma'ali. (1335/1956). Qābusnāme. Tehrān. Našriyāt-e Ebn-e Sinā.
21. Mo'in, M. (1345/1966). Farhang-e fārsi IV. Tehrān. Mousese-ye enteshārāt-e Amir Kabir.
22. Nafisi, 'A. (1355/1976). Farhang-e Nafisi V. Tehrān. Ketābforuši-e Xayyām.
23. Sotude, M. (1390/ 2011). Farhange gilaki. Rašt. Našr-e Farhang-e Ilia.
24. Xalaf-e Tabrizi, M. (1376/1997). Borhān-e Qāte' IV. Tehrān. Mousese-ye enteshārāt-e Amir Kabir.
25. Xayyām, 'O. (1312/1933). "Nouruznāme". Tehrān. Ketābxāne-ye Kāve.
26. www.tabarestan.ir (08.04. 2018).